Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2025 թ. որոշմամբ
««ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱ 5Ա 11 ԲՆ.
1.3 Պետական գրանցման համարը		222.160.24642
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-06-28
1.5 ՀՎՀՀ-ն		02600539
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11360404
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		hymnatavush2016@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մարսել Կևորկյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	27	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Կիրանցում գտնվող հողամասի փոխհատուցում	23,700,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	<<Գյուղատնտեսության զարգացում>> ծրագիր, «Օժանդակություն Հայաստանին» Ծրագիր	1,090,070,426
	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	9,446,825
	Բանկային մնացորդից և ավանդից ստացված եկամուտ	6,195,040

Digitally signed by ARAKELYAN KARINE

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	16,885,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Ջերմոցներ	37,252,797
	Վիտամինային հավելումներ	2,059,420
	Պոլիէթիլենային տոպրակներ	5,824,645
	Գործիքներ (ձեռքի, կտրող, հղկող գործիքներ, խոզանակներ)	19,540,000
	Լույսեր, լամպեր	1,208,781
	Շինարարական պարագաներ (դետալներ, էլեկտչրոդներ, եռակցման սարքեր, դետալներ և այլն)	2,345,000
	Էլեկտրական սարքավորումներ (լույսեր, լամպեր, մալուխներ)	1,786,347
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Գյուղատնտեսության զարգացում» Ծրագիր	532,343,318	
«Օժանդակություն Հայաստանին» Ծրագիր	643,392,859	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,175,736,177	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,175,736,177	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 40 էջ

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___40___ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ»
Զարգացման Հիմնադրամ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ
31 դեկտեմբեր 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

12.06.2025թ.
N 022510

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի (հետայսու՝ «Հիմնադրամ») և նրա դուստր ընկերության (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Մ. Պոնամարևա
12.06.2025թ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ՝ 2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Նախագահ

Պիեռ-Պետրոս Թերզեան	Հիմնադրի՝ Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի նախագահ (ի պաշտոնե)

Այլ անդամներ

Միշել-Քրիստ Փազումյան	Նշանակված Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի կողմից
Պետրոս-Միհրամ Քուրքջյան	Նշանակված Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի կողմից
Հայկակ Արշամյան	«Հայաստան» Համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն (ի պաշտոնե)
Արարատ Խլղաթյան	«Հայաստան» Համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի շինարարության գծով տեղակալ (ի պաշտոնե)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթ.	2024թ.	*(հազար դրամ)* 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	604,309	633,005
Ոչ նյութական ակտիվներ		6,962	-
Կենսաբանական ակտիվներ	5	75,423	109,099
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*686,694*	*742,104*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	170,481	193,392
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	64,951	58,646
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	322,535	353,473
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		557,967	*605,511*
Ընդամենը ակտիվներ		1,244,661	1,347,615
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	604,895	620,606
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*604,895*	*620,606*
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	68,464	60,866
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*68,464*	*60,866*
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		571,302	666,143
Ընդամենը զուտ ակտիվներ		*571,302*	*666,143*
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		1,244,661	1,347,615

Մարուսի Կնորկյան
Գործադիր տնօրեն

Կարինե Առաքելյան
Գլխավոր հաշվապահ

12.06.2025թ.

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթ.	**2024թ.**	**2023թ.**
Գործունեությունից եկամուտ	11	1,414,158	1,376,544
Անհատույց օգնության գծով ծախսեր	12	(744,311)	(506,670)
Գործունեությունից ծախսեր	13	(624,069)	(563,239)
Վարչական ծախսեր	14	(139,315)	(117,838)
Գործառնական գործունեությունից արդյունք		**(93,537)**	**188,797**
Ֆինանսական եկամուտ		5,066	2,045
Փոխարժեքային տարբերությունից վնաս		(6,370)	(5,146)
Արդյունք մինչև հարկումը		**(94,841)**	**185,696**
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա արդյունք		**(94,841)**	**185,696**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**480,447**	**480,447**
Տարվա արդյունք	186,696	186,696
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**666,143**	**666,143**
Տարվա արդյունք	(94,841)	(94,841)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**571,302**	**571,302**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(94,841)	185,696
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	88,616	92,320
Հիմնական միջոցների օտարումից վնաս	9,961	47
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(97,662)	(91,513)
Ստացված շնորհներից եկամուտ	(1,101,340)	(1,069,032)
Կենսաբանական ակտիվների սկզբնական ճանաչումից օգուտ	(16,132)	(31,344)
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից վնաս/(օգուտ)	8,139	(16,959)
Կենսաբանական ակտիվներ անհատույց տրամադրելու հետ կապված ծախսեր	3,048	9,289
Կովերի և հորթերի անկումից ու օտարումից վնաս	38,621	28,120
Ֆինանսական եկամուտ	(5,066)	(2,045)
Անհուսալի ակտիվների դուրսգրում	-	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս	6,370	5,146
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	**(1,160,286)**	**(890,275)**
Պաշարների նվազում	92,928	60,352
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում	(10,714)	16,932
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի նվազում	7,643	(9,888)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**(1,070,429)**	**(822,879)**
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ	1,113,274	984,470
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**42,845**	**161,591**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(76,844)	(30,949)
Ստացված տոկոսներ	5,066	2,045
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(71,778)**	**(28,904)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(28,933)**	**132,687**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,005)	(578)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	353,473	221,364
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցները և նրանց համարժեքները	**322,535**	**353,473**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամը (Հիմնադրամ) կամավոր գույքային վճարի հիման վրա ստեղծված անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի (գրանցված Փարիզի ոստիկանության կողմից 1993թ. մայիսի 6-ին, հասցե՝ Ֆրանսիա, 75660 Փարիզ (14) Բե-Պե12) 2011թ. հունիսի 16-ի թիվ 1 որոշմամբ:

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Ֆրանսիայի Օ-դը-Սեն վարչական շրջանի գլխավոր Խորհրդի (CG92) և Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի կողմից մշակված և «Հայաստան» Համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի գերակա ծրագրով հաստատված «ՀիմնաՏավուշ» ծրագրի շրջանակներում:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունի դուստր ընկերություն՝ «ԷկոՏավուշ» ՍՊԸ (100% բաժնեմաս, կանոնադրական կապիտալը կազմում է 10 հազար դրամ) (միասին՝ Խումբ):
Հիմնադրամի գործունեության նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գյուղացիական տնտեսության զարգացմանը բոլոր ոլորտներում, գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և պարենի անբավարարության կրճատմանը: Հիմնադրամի շահառուները կարող են լինել ՀՀ Տավուշի մարզում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը, տեղական գյուղացիական միությունները, ինչպես նաև գյուղացիների այլ խմբերն ու միավորումները:

Դուստր ընկերության գործունեության նպատակն է գյուղատնտեսական արտադրանքի արտադրության կազմակերպումը և իրացումը, ինչպես նաև դուստր ընկերության միակ հիմնադրի գործունեության կանոնադրական նպատակներին առնչվող ցանկացած այլ առևտրային գործունեության իրականացումը:

Խմբի գործունեության հիմնական տեսակներն են.

- գյուղատնտեսական արտադրանքների մթերում, ձեռք բերում, մշակում, վերամշակում, իրացում;
- մշակված և/կամ վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի մթերում, ձեռքբերում, իրացում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պողոտա, 5գ/21 շենք:
Դուստր ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք, Երևան, Մաշտոցի պողոտա, 5գ/21 շենք:
Խմբի աշխատակիցների թվաքանակը 2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 39 մարդ (2023թ.՝43 մարդ):

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերաթյաններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «*Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների*»:

2.2 Ճանաչման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ կենսաբանական ակտիվների (սկզբնական և հետագա չափման մասով) և կենսաբանական ակտիվներից ստացվող բերքի (սկզբնական չափման մասով), որոնք ներկայացված են իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում» ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- «Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ» (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- «Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում» (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ» (ՀՀՄՍ 12 փոփոխություն)
- «Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ» (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»:

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը՝

2024թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնա–բաժին, %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռք-բերման ամսաթիվ
«ԷկոՏավուշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	100%	Հայաստանի Հանրապե-տություն	2013թ. Դեկտեմբերի 2	Կաթնամթերքի արտադրություն	2013թ.

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններ

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասի չափից:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է տարվա արդյունքում:

Չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվետու ամսաթվի դրությամբ չվերահսկող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկվող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

Համախմբման արդյունքում չներառված գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին՝ 3.71 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին՝ 4.50 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	5-20 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-10 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	-	3-10 տարի
Համակարգչային տեխնիկա	-	1-5 տարի
Տնտեսական գույք	-	1-5 տարի

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվները ներառում են հաշվապահական հաշվառման ծրագիր և այլ ոչ նյութական միջոցներ:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը հաշվապահական հաշվառման ծրագրի համար կազմում է 5 տարի, իսկ այլ ոչ նյութական միջոցների համար 3 տարի:

3.5 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվն իրենից ներկայացնում է կենդանի բույս կամ կենդանի: Գյուղատնտեսական արտադրանքը Խմբի կենսաբանական ակտիվներից ստացված արտադրանքն է:

Խումբը ճանաչում է կենսաբանական ակտիվը կամ գյուղատնտեսական արտադրանքը այն և միայն այն դեպքում, երբ.

ա) ակտիվը վերահսկվում է Խմբի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,
բ) հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ,
գ) ակտիվի իրական արժեքը կամ ինքնարժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել։

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն դեպքի, երբ իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել։

Խմբի կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները։ Նման չափումը հանդիսանում է սկզբնական արժեք այն ամսաթվի դրությամբ, երբ կիրառվում է ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտը կամ այլ համապատասխան ստանդարտ։

Եթե գոյություն չունի գործող շուկա, Խումբն իրական արժեքը որոշելիս կիրառում է ներքոհիշյալներից մեկը կամ մի քանիսը, երբ դրանք մատչելի են՝

ա) ամենավերջին շուկայական գործարքի գինը՝ պայմանով, որ գործարքի ամսաթվի և հաշվետու ժամանակաշրջանի միջև տնտեսական պայմանների զգալի փոփոխություն տեղի չի ունեցել,
բ) համանման ակտիվների շուկայական գները՝ արտացոլելով տարբերությունների գծով ճշգրտումները,
գ) ճյուղային չափորոշիչները, օրինակ՝ խոշոր եղջերավոր անասունների արժեքը՝ մեկ կիլոգրամ մսի հաշվով։

Որոշ դեպքերում կենսաբանական ակտիվի ներկա վիճակի համար շուկայում որոշված գները կամ արժեքները կարող են առկա չլինել։ Այս դեպքերում Խումբն իրական արժեքը որոշելիս կիրառում է ակտիվից դրամական միջոցների ակնկալվող զուտ հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված ընթացիկ շուկայական դրույքով։

Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական ակտիվի՝ վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքի փոփոխությունից ներառվում են այն ժամանակաշրջանի արդյունքներում, որում դրանք առաջացել են։

Գյուղատնտեսական արտադրանքի, որը չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, սկզբնական ճանաչման պահին առաջացած օգուտը կամ վնասը ներառվում է այն ժամանակաշրջանի արդյունքներում, որում առաջացել է։

Կենսաբանական ակտիվին, որը չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, վերաբերող ոչ պայմանական շնորհը ճանաչվում է տարվա արդյունքում այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է ստացման ենթակա։

Եթե կենսաբանական ակտիվին, որը չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, վերաբերող շնորհը պայմանական է, ներառյալ, երբ շնորհը Խմբից պահանջում է չզբաղվել որոշակի գյուղատնտեսական գործունեությամբ, ապա Խումբը շնորհը ճանաչում է տարվա արդյունքում այն և միայն այն դեպքում, երբ բավարարված են շնորհին կցված պայմանները։

Որպես ոչ պայմանական շնորհ ստացված կենսաբանական ակտիվները ճանաչվում են տարվա արդյունքում, որպես եկամուտ։

Կենսաբանական ակտիվների՝ կովերի անկման դեպքում, կովերը անկման օրվա դրությամբ բերվում են իրական արժեքի՝ շուկայում գործող գնից ելնելով։ Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ անկման հետ կապված ծախսումները հանած իրական արժեքի փոփոխությունից ներառվում են այն ժամանակաշրջանի արդյունքներում, որում դրանք առաջացել են։ Անկման օրվա դրությամբ վերագնահատված կովի իրական արժեքը ճանաչվում է ծախս այն ժամանակաշրջանի արդյունքներում, որում դրանք առաջացել են։

Կենսաբանական ակտիվների՝ կովերի օտարման դեպքում, կովերը վաճառքի օրվա դրությամբ բերվում են իրական արժեքի՝ շուկայում գործող գնից ելնելով: Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ կովի վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանականակտիվի՝ վաճառքի հետ կապված ծախսումները հանած իրական արժեքի փոփոխությունից ներառվում են այն ժամանակաշրջանի արդյունքներում, որում դրանք առաջացել են:

3.6 Պաշարներ

Խմբի պաշարներում ներառված են որպես նվիրատվություն ստացված պաշարները, գնված պաշարները և Խմբի գործունեության արդյունքում ձևավորված կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը:

Պաշարները, բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի, հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

ՀՀՄՍ 41-ի «Գյուղատնտեսություն» համաձայն այն պաշարները, որոնք ներառում են կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանք, չափվում են սկզբնապես ճանաչման պահին դրանց իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Վերը նշվածը, սույն ստանդարտի կիրառման առումով, պաշարների ինքնարժեքն է՝ այդ ամսաթվի դրությամբ:

Նվիրատվությամբ ստացված պաշարները հաշվապահական հաշվառման գրանցումներում ճանաչվում են ստացված պաշարները ուղեկցող փաստաթղթերում արտացոլված անվանական արժեքով՝ գումարած մաքսազերծման հետ կապված ծախսումները:

Պաշարների ծախսագրումն իրականացվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ձևավորման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում – անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի

ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:
Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի զեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում
Ֆինանսական ակտիվներ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Խումբն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.8 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ՝ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական:

Խումբը ճանաչում է սպավող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Խումբը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

(i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
(ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Խմբի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

(i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Խումբը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ

(ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Խումբը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
- Խմբի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Խումբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Խումբը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Խումբը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Խմբի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Խումբն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում է արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Խումբը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերվող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Որպես ոչ պայմանական շնորհ ստացված կենսաբանական ակտիվները ճանաչվում են տարվա արդյունքում՝ որպես եկամուտ:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հողի շնորհը հաշվառվում է շենքի կառուցման ժամանակ և ճանաչվում է ֆինանսական արդյունքում շենքի շահագործման ողջ ընթացքում:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները։

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից։ Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար։ Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել Նվազեցվող ժամանակավոր տարբերությունը։ Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ՝ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից)։

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում։ Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող արդյունքի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում։

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբ կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել։

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում։ Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները։

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները։

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները։ Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ։

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.13 Եկամտի ճանաչում

Ֆինանսավորումից եկամուտ

«ՀիմնաՏավուշ» ծրագրի իրականացման շրջանակներում «ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամին տրամադրվում է ֆինանսական աջակցություն:

Այս եկամուտը ճանաչվում է, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ նվիրատվությունը ստացվելու է կամ, երբ նվիրատվությունը փաստացի ստացվել է: Այն ստացված գումարները, որոնց մասով չի կատարվում կից պայման և վերադարձման ենթակա չէ, ճանաչվում են որպես եկամուտ: Այս եկամուտը ներառվում է «Գործունեությունից եկամուտ» հոդվածում:

Շնորհներից եկամուտ

Շնորհներից եկամտի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.9-ում:

Կենսաբանական ակտիվների սկզբնական ճանաչումից և *իրական արժեքի փոփոխությունից եկամուտ*

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

Կենսաբանական ակտիվի սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի չափով ճանաչվում է եկամուտ, որը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Գործունեությունից եկամուտ» հոդվածում:

Կենսաբանական ակտիվի իրական արժեքի հետագա փոփոխությունից աճը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Գործունեությունից եկամուտ» հոդվածում՝ որպես կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից օգուտ:

Գյուղատնտեսական արտադրանքի սկզբնական ճանաչումից եկամուտ

Խմբի կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

Գյուղատնտեսական արտադրանքի սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի չափով ճանաչվում է եկամուտ, որը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Գործունեությունից եկամուտ» հոդվածում:

Դուստր ընկերության գործունեությունից հասույթ

Այս հասույթը ներառում է գյուղատնտեսական ապրանքների վաճառք: Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

- Խումբը զնորդին է փոխանցել գյուղատնտեսական արտադրանքի սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- Խումբը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ոչ էլ՝ վաճառված գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել եկամուտի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

Այս հասույթը ներառվում է "Գործունեությունից եկամուտ" հոդվածում:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել եկամուտի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.14 Աշխատավարձի գծով ծախսերի բաշխում

Աշխատավարձի գծով ծախսերի բաշխումն իրականացվում է ըստ իրենց գործառույթի՝ որպես անասնաֆերմայի, ուսումնական կենտրոնի, ջերմոցի շահագործման ծախսեր, ինչպես նաև կաթնամթերքի իրացման հետ կապված ծախսեր, ինքնարժեքի մաս կազմող ծախսումներ և վարչական գործունեությունից ծախսումներ:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Հող, շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ և տնտեսական գույք	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Ակտիվի սկզբնական արժեք					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	745,527	496,860	192,415	-	1,434,802
Ավելացում	10,635	6,262	2,795	11,257	30,949
Օտարում/Դուսգրում	-	(231)	(53)	-	(284)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	756,162	502,891	195,157	11,257	1,465,467
Ավելացում	14,490	35,707	8,136	10,901	69,234
Ներքին շարժ	18,844	3,314	-	(22,158)	-
Օտարում/Դուսգրում	(23,362)	-	-	-	(23,362)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	766,134	541,912	203,293	-	1,511,339
Մաշվածություն					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	270,695	328,888	141,153	-	740,736
Տարվա մաշվածություն	43,363	35,200	13,400	-	91,963
Օտարում/Դուսգրում	-	(228)	(9)	-	(237)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	314,058	363,860	154,544	-	832,462
Տարվա մաշվածություն	42,250	36,483	9,236	-	87,969
Օտարում/Դուսգրում	(13,401)	-	-	-	(13,401)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	342,907	400,343	163,780	-	907,030
Հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**442,104**	**139,031**	**40,613**	**11,257**	**633,005**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**423,227**	**141,569**	**39,513**	**-**	**604,309**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի։

2024 թվականին «Հող, շենքեր և շինություններ» հիմնական միջոցների դասի ավելացումների գերակշիռ մասը պայմանավորված է ագրոգործիքների արհեստանոցի և 260 քմ մակերեսով պահեստի շինարարական աշխատանքներով։ «Մեքենաներ և սարքավորումներ» դասի ավելացումների հիմնական բաղադրիչն են արևի էներգիայից էլեկտրաէներգիա արտադրող սարքավորման, ինչպես նաև այգու և ջերմոցների կաթիլային ոռոգման համակարգերի ձեռքբերումները։

2024 թվականին «Հող, շենքեր և շինություններ» դասի դուրսգրումն իրականացվել է Տավուշի մարզի «Կիրանց 1-ին փողոց 2/3 հողամաս» հասցեում գտնվող, Հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող հողամասի և շենքերի հաշվառումից հանման միջոցով։ Տվյալ գույքը սահմանազատման արդյունքներով անցել է Ադրբեջանի Հանրապետության տարածք։ Սույն հիմքով Հիմնադրամը ստացել է փոխհատուցում ՀՀ կառավարության կողմից՝ 23,700 հազար դրամի չափով։

2023թ. ավելացումներում ներառված են հիմնական միջոցների վերակառուցման կապիտալ ծախսերը՝ 9,520 հազար դրամ: Ֆրանսիայի Հայկական հիմնադրամից ստացված հիմնական միջոցներ՝ 4,447: Ստացված դրամական միջոցների հաշվին հիմնական միջոցների ավելացումը՝ 14,264 հազար դրամ, որից 1,116 հազար դրամը օգտագործվել է հողամասեր ձեռք բերելու համար, 11,257 հազար դրամը օգտագործվել է անավարտ հիմնական միջոցների կառուցման համար, 1,891 հազար դրամը օգտագործվել է մեքենա-սարքավորումներ ձեռք բերելու համար։

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրոյական հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 376,923 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 354,569 հազար դրամ)։

Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Անասնաֆերմայի շահագործման ծախսեր	76,527	79,998
Ագրոբազայի շահագործման ծախսեր	1,311	1,149
Ուսումնական կենտրոնի շահագործման ծախսեր	4,140	4,478
Կաթնամթերքի իրացման հետ կապված ծախսեր	628	426
Վարչական ծախսեր	5,363	5,912
	87,969	**91,963**

5 ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	109,099	98,205
Նոր ծնված հորթերի սկզբնական ճանաչում իրական արժեքով (Տես՝ Ծան. 11)	3,412	5,066
Նոր ծնված գառների սկզբնական ճանաչում իրական արժեքով (Տես՝ Ծան. 11)	12,720	26,278
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից օգուտ (Տես՝ Ծան. 11)	-	16,959
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից վնաս (Տես՝ Ծան. 13)	(8,139)	-
Կովերի և հորթերի անկումից վնաս (Տես՝ Ծան. 13.1)	(8,873)	(7,427)
Կենսաբանական ակտիվների վաճառքից վնաս	(29,748)	(20,693)
Անհատույց տրամադրված կովերի և հորթերի հաշվեկշռային արժեք (Տես՝ Ծան. 12)	(3,048)	(9,289)
Տարեվերջի մնացորդ	**75,423**	**109,099**

Կենսաբանական ակտիվների քանակը հետևյալն է՝

(գլուխ)

	2024թ.	2023թ.
Ջերսեյ ցեղատեսակի կովեր		
կովեր	67	81
հորթեր	63	40
երինջներ	24	45
ցլիկներ	-	-
Ֆլեգվի (Սիմենտալ) ցեղատեսակի կովեր		
կովեր	-	1
Սիմենտալ ցեղատեսակի կովեր		
կովեր	24	28
հորթեր	24	23
երինջներ	14	25
ցլիկներ	1	-
Մանր եղջերավոր անասուններ (ոչխարներ, գառներ)	122	172
	339	**415**

6 ՊԱՇԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Նյութեր	59,657	60,574
Վառելիք	864	1,100
Շինանյութեր	4,734	4,787
Պատրաստի գյուղատնտեսական արտադրանք	37,855	37,802
Անավարտ գյուղատնտեսական արտադրանք	4	1,507
Այլ նյութեր	23,634	17,814
Այլ ապրանքներ	43,733	69,808
	170,481	**193,392**

Հաշվետու տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 82,760 հազար դրամ (2023թ.՝ 117,227 հազար դրամ), իսկ հիմնական միջոցների արժեքին կապիտալացված պաշարների արժեքը կազմում է 8,983 հազար դրամ (2023թ.՝ 5,552 հազար դրամ)։
Հաշվետու տարվա ընթացքում շահառուներին անհատույց տրամադրվել են 568,027 հազար դրամի պաշարներ և անհատույց ստացվել են 70,017 հազար դրամի պաշարներ։

Պատրաստի գյուղատնտեսական արտադրանքը իր մեջ ներառում է հետևյալ արտադրատեսակները.

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Կաթ	53	62
Կաթնաշոռ	5	6
Կաթի սեր	22	24
Պանիր	36,239	35,493
Կարագ	2	13
Հալած յուղ	1,534	2,204
	37,855	**37,802**

7 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	34,670	27,335
Տրված կանխավճարներ	30,281	31,311
	64,951	**58,646**

Բոլոր գումարները կարճաժամկետ են։ Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում։ Դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում։

8 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Կանխիկ միջոցներ	313	58
Բանկային հաշիվներ	322,222	353,415
	322,535	**353,473**

9 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Մնացորդը առ 01 հունվար	**620,606**	**693,408**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու համար Ֆրանսիայի Հայկական հիմնադրամից ստացված դրամական միջոցներ	78,432	14,264
Ֆրանսիայի Հայկական հիմնադրամից ստացված հիմնական միջոցներ	3,519	4,447
Ճանաչված եկամուտ	(97,662)	(91,513)
Տարեվերջի մնացորդ	**604,895**	**620,606**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվներին վերաբերող շնորհներում ներառված են 604,895 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 620,606 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ:

9.1 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Մնացորդը առ 01 հունվար	-	-
Ֆինանսավորում	1,113,274	984,469
Անհատույց ստացված պաշարներ	70,017	103,274
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհների	(81,951)	(18,711)
Ստացված ֆինանսավորման իրացումից եկամուտ	(1,101,340)	(1,069,032)
Տարեվերջի մնացորդ	-	-

10 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,015	2,957
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	10,218	8,260
Փոխանցումներ աշխատակիցներին	53,231	49,649
	68,464	**60,866**

Կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

11 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Ստացված ֆինանսավորման իրացումից եկամուտ	1,101,340	1,069,032
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	97,662	91,513
Արտադրանքի իրացումից հասույթ	85,030	75,303
Կաթի՝ իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ	40,760	51,610
Խոտի՝ իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ	25,098	28,399
Պտուղ բանջարեղենի՝ իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ	23,916	11,848
Հորթերի՝ իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ	3,412	5,066
Գառների՝ իրական արժեքով սկզբնական ճանաչումից օգուտ	12,720	26,278
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից օգուտ	-	16,959
Այլ եկամուտ	24,220	536
	1,414,158	**1,376,544**

11.1 Արտադրանքի իրացումից հասույթ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Պանրի իրացումից եկամուտ	76,986	70,711
Կաթի իրացումից եկամուտ	7,281	-
Կաթի սերի իրացումից եկամուտ	62	226
Կարագի իրացումից եկամուտ	189	412
Կաթնաշոռի իրացումից եկամուտ	4	322
Հալած յուղի իրացումից եկամուտ	508	3,335
Այլ եկամուտ	85,030	297
	76,986	**75,303**

12 ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Սերմերի, տնկիների և սածիլների անհատույց տրամադրում	470,957	311,618
Վերանորոգումներ	148,946	-
Քոլեջին նվիրատվություն	18,989	46,438
Ջերմոցների նվիրատվություն	39,775	33,779
Ոչ ընթացիկ ակտիվների նվիրատվություն	-	59,312
Պարենամթերքի անհատույց տրամադրում	11,976	11,007
Այլ նյութերի անհատույց տրամադրում	35,242	28,332
Կովերի, հորթերի և գառների անհատույց տրամադրում	3,048	9,289
Փեթակների նվիրատվություն	-	3,200
Ֆինանսական օգնություն	7,340	2,208
Այլ	8,038	1,487
	744,311	**506,670**

Անհատույց օգնության գծով ծախսերի առավել մանրամասն բացվածքը ըստ ՀՀ մարզերի տես ծանոթագրություն 22-ում:

13 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Անասնաֆերմայի շահագործման ծախսեր (Տես՝ Ծան 13.1)	357,677	366,404
Ծրագրերի իրականացման մեջ ներգրավված աշխատակիցների աշխատավարձ	90,617	76,345
Կաթնամթերքի արտադրության ինքնարժեք (Տես՝ Ծան 13.2)	60,697	50,536
Կաթնամթերքի իրացման հետ կապված ծախսեր (Տես՝ Ծան 13.3)	38,727	25,150
Ուսումնական կենտրոնի շահագործման ծախսեր (Տես՝ Ծան 13.4)	5,317	5,732
Ագրոբազայի շահագործման ծախսեր	1,311	1,149
Անասբնաբուժական փորձաքննություն	3,072	-
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից վնաս, զուտ	8,139	-
Կենսաբանական ակտիվների վաճառքից ծախս, զուտ	3,458	6,212
Դասընթացներ	15,265	
Ծրագրերի իրականացման գործուղման և ներկայացուցչական ծախսեր	18,548	12,636
Տրանսպորտային ծախսեր	11,303	7,108

Ագրոտուրիզմ	6,059	
Այլ ծախսեր	3,928	11,967
	624,069	**563,239**

13.1 Անասնաֆերմայի շահագործման ծախսեր

(հազար դրամ)

	2024թ.	**2023թ.**
Անասնակեր	97,199	98,085
Փոխհատուցումներ աշխատակիցներին	88,781	96,363
Մաշվածություն	76,527	79,998
Վերանորոգման և պահպանման ծախսեր	14,526	18,739
Վարձակալության գծով ծախսեր	15,810	16,865
Վառելիք	12,492	10,688
Ստացված ծառայություններ	20,694	13,714
Կովերի և հորթերի անկումից վնաս	8,873	7,427
Կոմունալ վճարներ	8,371	11,946
Կաթի օգտագործում	3,286	5,342
Դեղորայք և անասնաբուժական սարքավորում	2,719	3,100
Ցանքսի գծով ծախսեր	7,244	2,148
Այլ	1,155	1,989
	357,677	**366,404**

Կաթի օգտագործման ծախսը վերաբերում է հորթերին և գառներին կաթ կերակրելու հետ կապված ծախսումներին:

13.2 Կաթնամթերքի արտադրության ինքնարժեք

(հազար դրամ)

	2024թ.	**2023թ.**
Պանրի ինքնարժեք	58,422	49,523
Հալած յուղի ինքնարժեք	2,058	840
Կաթի սերի ինքնարժեք	4	17
Կարագի ինքնարժեք	17	46
Կաթնաշոռի ինքնարժեք	1	110
Այլ ինքնարժեք	195	-
	60,697	**50,536**

13.3 Կաթնամթերքի իրացման հետ կապված ծախսեր

(հազար դրամ)

	2024թ.	**2023թ.**
Փոխհատուցումներ աշխատակիցներին	17,090	5,627
Մաշվածություն և ամորտիզացիա	1,108	426
Փաթեթավորման ծախսեր	11,765	12,064
Գովազդի և մարկետինգի ծախսեր	1,990	357
Բեռնափոխադրման ծախսեր	3,249	2,182
Իրացման այլ ծասեր	3,525	4,494
	38,727	**25,150**

13.4 Ուսումնական կենտրոնի շահագործման ծախսեր

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Մաշվածություն	4,140	4,478
Վերանորոգման և պահպանման ծախսեր	1,177	1,254
	5,317	**5,732**

14 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	62,975	51,805
Գործուղման ծախսեր	4,511	1,240
Վարձակալության գծով ծախսեր	15,862	15,708
Ներկայացուցչական ծախսեր	2,147	561
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	4,501	2,278
Ստացված ծառայություններ	18,225	15,272
Մաշվածություն և ամորտիզացիա	5,518	6,271
Աուդիտ և խորհրդատվություն	6,608	5,587
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	4,976	4,874
Վերանորոգման և պահպանման ծախսեր	1,519	720
Տրանսպորտային ծախսեր	179	-
Վառելիք	3,413	5,134
Այլ ծախսեր	8,881	8,388
	139,315	**117,838**

15 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

15.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Կենսաբանական ակտիվների իրական արժեք

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2.2-ում՝ Խմբի կենսաբանական ակտիվները և կենսաբանական ակտիվներից ստացվող բերքը հաշվառում է իրական արժեքով:

Կենսաբանական ակտիվների իրական արժեքները գնահատվում են Խմբի մասնագետների կողմից, չհիմնվելով շուկայում գործող սակավաթիվ գների վրա, որովհետև նման կայացած շուկա Հայաստանում դեռևս չկա:

Գյուղատնտեսական արտադրանքի (կովերից ստացված կաթ, խոտ) իրական արժեքը որոշվում է ելնելով տվյալ պահին գործող շուկայական գնով:

Ղեկավարության համոզմամբ իրական արժեքի որոշման մեխանիզմներն արտացոլում են շուկայում ներկայումս առկա միտումները: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, կառաջանա ֆինանսական հաշվետվությունների հետագա ճշգրտման անհրաժեշտություն:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

16 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ		*(հազար դրամ)*
	2024թ.	**2023թ.**
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	64,951	58,646
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	322,535	353,473
	387,486	**412,119**

Ֆինանսական պարտավորություններ		*(հազար դրամ)*
	2024թ.	**2023թ.**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	68,464	60,866
	68,464	**60,866**

17 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	64,951	58,646
Մնացորդներ բանկերում	322,222	353,415
	387,173	**412,061**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են։

բ) *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները։

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով։

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները։ Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները։ Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը։

2024 *(հազար դրամ)*	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 6 ամիս	6 ամսից – 1 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	68,464	68,464	15,233	53,231
	68,464	**68,464**	**15,233**	**53,231**

2023 *(հազար դրամ)*	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 6 ամիս	6 ամսից – 1 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	60,866	60,866	11,217	49,649
	60,866	**60,866**	**11,217**	**49,649**

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը։ Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը։

18 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՈՒՄ

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին։

18.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ոչ ֆինանսական ակտիվները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա։ Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)։

Խմբի կենսաբանական ակտիվները հաշվառվում են վերագնահատված արժեքով։ Կենսաբանական ակտիվների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում։ Այս ակտիվների իրական արժեքների գնահատումն իրականացվել է անկախ պրոֆեսիոնալ գնահատողի կողմից, որն ունի պատշաճ մասնագիտական որակավորում, անհրաժեշտ արտոնագրեր և համապատասխան փորձ անշարժ և շարժական գույքի իրական արժեքի գնահատում իրականացնելու ոլորտում։ Գնահատող ընկերությունը Խմբին կապակցված կողմ չի հանդիսանում։ Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են։ Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում։ Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև։

Կենսաբանական ակտիվներ (2-րդ մակարդակ)

Կենսաբանական ակտիվների գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով շուկայական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ ակտիվների համար վերջերս իրականացված շուկայական գործարքներում դիտարկված գները։ Կենսաբանական ակտիվների միավորի վերականգնման արժեքը որոշվել է Ռուսաստանի Դաշնության շուկայի առուվաճառքների ու առաջարկների հիման վրա, քանի որ Ռուսաստանի Դաշնության շուկան գնահատման ենթակա կենսաբանական ակտիվների համար հանդիսանում է հիմնական շուկա։ Կենսաբանական ակտիվները վերագնահատվել են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ։

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ոչ ֆինանսական ակտիվների հիերարխիայում՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ։

2024
(հազար դրամ)

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Կենսաբանական ակտիվներ	-	75,423	-	75,423
	-	**75,423**	**-**	**75,423**

2023
(հազար դրամ)

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Կենսաբանական ակտիվներ	-	109,099	-	109,099
	-	**109,099**	**-**	**109,099**

19 ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

Խումբը որպես վարձակալ

Խումբը գործառնական վարձակալությամբ ստացել է գրասենյակային տարածք և խանութ Երևանում և Իջևանում, ինչպես նաև պահեստ և հողեր Լուսաձոր և Խաշտառակ գյուղերում։ Խումբը վարձակալության ժամանակաշրջանի վերջում հնարավորություն չունի ձեռք բերել վարձակալված ակտիվները։

20 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Խմբի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

20.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իրակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ անեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20.4 Շրջակա միջավայր

Ղեկավարության համոզմամբ՝ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և

դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

21 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունը (առանձին ֆինանսական հաշվետվությունների համար), հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

21.1 Վերահսկողություն

Հիմնադրամը ստեղծվել է Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի (գրանցված Փարիզի ոստիկանության կողմից 1993թ. մայիսի 6-ին, հասցե՝ Ֆրանսիա, 5660 Փարիզ (14) ԲԵ-ՊԵ12) 2011թ. հունիսի 16-ի թիվ 1 որոշմամբ: Հիմնադրամի գործունեությունը գտնվում է Ֆրանսիայի հայկական հիմնադրամի վերահսկողության ներքո:

21.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ		*(հազար դրամ)*
	2024թ.	**2023թ.**
Ֆրանսիայի Հայկական հիմնադրամ		
Հիմնական միջոցների տրամադրում		4,447
Ֆինանսական աջակցություն	1,054,719	984,470
Պաշարների տրամադրում	70,017	103,274
	1,124,736	**1,092,191**

21.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

		(հազար դրամ)
	2024թ.	**2023թ.**
Աշխատավարձ և պարգևատրումներ	7,511	6,569
	7,511	**6,569**

22 ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

ՀՀ Սյունիքի մարզ

- անհատույց տրամադրում- 36,941,340 դրամ:
- Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում ապրող բնակիչներին տնկիների անհատույց տրամադրում- 150,395,000 դրամ:
- Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում ապրող բնակիչներին սածիլների անհատույց տրամադրում- 63,543,056 դրամ:
- Սյունիքի մարզի 5 բնակավայրերին կարտոֆիլի սերմացուի նվիրատվություն- 3,714,000 դրամ:
- Սյունիքի մարզի Խնձորեսկ կոպերատիվին հացահատիկի ստացման սարքավորման ձեռք բերման համար գումարի նվիրատվություն- 3,600,000 դրամ:
- Սյունիքի մարզի բնակիչներին խոտհնձիչների, սրսկիչների նվիրատվություն- 3,180,000 դրամ:
- Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Սպանդարյան ջրանցքի վերակառուցում» օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում - 7,500,000 դրամ

- Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Լոր բնակավայրի ոռոգման ջրագծի մասնակի վերանորոգում - 17,882,021 դրամ:
- Սյունիքի մարզի սահմանամերձ գյուղերում ապրող բնակիչներին հացահատիկի սերմացուի անհատույց տրամադրում- 41,289,000 դրամ:
- Սյունիքի մարզին անապահով ընտանիքներին շինանյութի, ցանկապատի, ոռոգման խողովակի, տեղեկատվական ցուցանակների, տեխնիկայի անհատույց տրամադրում- 5,960,660 դրամ:

Ընդամենը 334,005,077 դրամ:

Արցախի Հանրապետության շահառուներ

- Արցախից բռնի տեղահանված բնակիչների համար թվով 28 տան անհատույց վերանորոգում, շինանյութերի տրամադրում- 143,991,200 դրամ:
- Արցախից բռնի տեղահանված բնակիչներին կենսաբանական ակտիվների՝ գառների տրամադրում 940,000 դրամ :

Ընդամենը 144,931,200 դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզ

- Գեղարքունիքի մարզի բնակիչներին տնկիների անհատույց տրամադրում- 27,000,000 դրամ:
- Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գյուղերում ապրող բնակիչներին սածիլների անհատույց տրամադրումը՝ 39,556,110 դրամ:
- Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գյուղերում ապրող բնակիչներին հնդկաձավարի սերմնացուի անհատույց տրամադրում -7,830,000 դրամ:

Ընդամենը 74,386,110 դրամ

«Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամ

«Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի համարի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու համար գույքի, շինանյութի, գումարի, ջերմոցի, արտահագուստի անհատույց տրամադրում- 21,561,870 դրամ:

Ընդամենը 21,561,870 դրամ

Այլ ծրագրեր 2025թ

- Շիրակի մարզում խոշոր եղջերավոր անասունների շրջանում հիվանդությունների ախտորոշման ծրագիրը՝ 3,071,933 դրամ
- Ագրոտուրիզմի զարգացման ծրագիր Տավուշի մարզում- 6,058,838 դրամ: